# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 300 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 135-Ա |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (01.03.2011-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 17.02.2011 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 28.02.2011 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 01.03.2011 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2011 թվականի N 135-Ա

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 300 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 600-Ն որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրված «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում 2010 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2011 թվականի փետրվարի 1-ը ներառյալ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքներից՝ համաձայն N 1 հավելվածի, մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը հետաձգել մինչև 2013 թվականի նոյեմբերի 15-ը:
2. Հավանություն տալ «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներդրումային ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքների և մոնիթորինգի համակարգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվելիք պայմանագրի նախագծին՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ սույն որոշման 2-րդ կետով հավանության արժանացած պայմանագրի կնքումը:
4. Սույն որոշման N 1 հավելվածում նշված են ապրանքների նախնական արժեքները:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Տ. Սարգսյան**

2011 թ. փետրվարի 28
Երևան

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2011 թվականի**
**փետրվարի 17-ի N 135-Ա որոշման**

**Ց Ա Ն Կ**

**«ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ**

| N | ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը | Անվանումը | Մոդելը | Չափի միավորը | Քանակը | Ծագման երկիրը | Արտահանման երկիրը | Արժեքը, դրամ | Ներմուծման ժամկետը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | տարի | եռամսյակ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | 84021990 026 | Բարձր ջերմաստիճանի տաքացուցիչ /1 հատ/ | ERENSAN HWR1000 | կգ | 2881 | Թուրքիա | Վրաստան | 48640500 | 2010 | IV |
| 2 | 73059000 | Էլ. եռակցման սև մետաղյա ծխատար խողովակ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար /1 հատ/ | - | կգ | 1840 | Թուրքիա | Վրաստան | 2017680 | 2010 | IV |
| 3 | 84212100 | Ջրի ֆիլտրման, փափկեցման սարքավորում մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար | 91F715T | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 5224350 | 2010 | IV |
| 4 | 72124080 | Պողպատյա թերթեր մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար | - | կգ | 1387.9 | Թուրքիա | Վրաստան | 1289874 | 2010 | IV |
| 5 | 73269098 | Սև մետ. սալիկ ծխատարի հ-ր /1 հատ/, գլխիկ /1 հատ/, բաքի ամրաշրջանակ /6 հատ/, հարթակ /2 հատ/, բրգաձև տարա /1 հատ/ | - | կգ | 2484.1 | Թուրքիա | Վրաստան | 3114794 | 2010 | IV |
| 6 | 85371099 | Էլ. կառավարման վահանակ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար /1 հատ/ | - | կգ | 90 | Թուրքիա | Վրաստան | 4467720 | 2010 | IV |
| 7 | 84161090 058 | Դիզելային հրածորան ջրատաքացուցիչ | UNIGAS PG81 GMD.S TR.A | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 3062550 | 2010 | IV |
| 8 | 73049000 | Սև մետաղյա, անկարան ծխատար խողովակ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար /1 հատ/ | - | կգ | 91 | Թուրքիա | Վրաստան | 504420 | 2010 | IV |
| 9 | 73090059 | Սև մետաղյա տարողություններ մատրիցային էմուլսիայի արտ-ան | - | կգ | 4262.2 | Թուրքիա | Վրաստան | 23203320 | 2010 | IV |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոսքագծի համար /7 հատ/ | | | | | | | | |
| 10 | 84193990 084 | Չորացուցիչ | TAMSAN TK360 | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 630525 | 2010 | IV |
| 11 | 84213920 | Չորացուցիչ սարքի օդի ֆիլտրեր մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար | - | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 134032 | 2010 | IV |
| 12 | 84138100 951 | Պոմպ ջրի | PX15/SSSSS/W FS/WF/WF | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 317064 | 2010 | IV |
| 13 | 84138100 952 | Պոմպ ջրի | PX8/SSSSS/WFS/WF/WF | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 5548620 | 2010 | IV |
| 14 | 73110091 | Խտացված օդի հեռացման սև մետաղյա տարրողություն /1 հատ/ | - | կգ | 45.7 | Թուրքիա | Վրաստան | 684570 | 2010 | IV |
| 15 | 84289095 063 | Միագիծ կռունկ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | - | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 2882400 | 2010 | IV |
| 16 | 84148080 478 | Կոմպրեսոր օդային | TAMSAN TVK6300 | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 12970800 | 2010 | IV |
| 17 | 85161019 203 | Օդաջեռուցիչ էլ. | SHC SSFE/FE UASC48/4R | հատ | 5 | Թուրքիա | Վրաստան | 5026185 | 2010 | IV |
| 18 | 73089099 | Սև մետաղյա կոնստրուկցիաներ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար | - | կգ | 400.9 | Թուրքիա | Վրաստան | 534325 | 2010 | IV |
| 19 | 84191900 090 | Ջրատաքացուցիչ արդյունաբերական | SHC SSFE/FE UASC48/4L | հատ | 4 | Թուրքիա | Վրաստան | 4395660 | 2010 | IV |
| 20 | 84313995 | Տելֆերի տակդիր /1 հատ/, հենակ /1 հատ/, շնեկի ամրաշրջանակ /1 հատ/ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար | - | կգ | 494 | Թուրքիա | Վրաստան | 771042 | 2010 | IV |
| 21 | 73269030 | Սև մետաղյա աստիճան /1 հատ/ | - | կգ | 31.2 | Թուրքիա | Վրաստան | 68457 | 2010 | IV |
| 22 | 70199099 | Մեկուսիչ նյութ՝ ապակեբամբակ առանց հիմքի | - | կգ | 225 | Թուրքիա | Վրաստան | 270225 | 2010 | IV |
| 23 | 84798200 167 | Էմուլսիոն մատրիցի խառնիչ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | PROMAK | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 38191800 | 2010 | IV |
| 24 | 73144900 | Սև մետաղյա ցանցեր տարրողությունների համար | - | կգ | 232 | Թուրքիա | Վրաստան | 216180 | 2010 | IV |
| 25 | 73101000 | Սև մետաղյա տարրողություն ֆիլտրի համար /1 հատ/ | - | կգ | 650 | Թուրքիա | Վրաստան | 1405170 | 2010 | IV |
| 26 | 84798200 168 | Հանքային յուղի խառնիչ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | PROMAK | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 1729440 | 2010 | IV |
| 27 | 84798200 170 | Յուղային էմուլսարարի խառնիչ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | GEMAK | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 1765470 | 2010 | IV |
| 28 | 84798200 171 | Էմուլսիոն մատրիցայի խառնիչ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | ELK | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 6845700 | 2010 | IV |
| 29 | 84314980 | Տեղափոխման շնեկ մատրիցային էմուլսիայի արտ-ան հոսքագծի համար /1 հատ/ | - | կգ | 338 | Թուրքիա | Վրաստան | 1354728 | 2010 | IV |
| 30 | 84798200 169 | Օֆսիդիչի խառնիչ ըստ փ/ա 2010/33/38299, 38300, 38301, 38303 | PROMAK | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 38552100 | 2010 | IV |
| 31 | 15151910 | Կտվատի ձեթ տեխնիկական | - | կգ | 3 | Թուրքիա | Վրաստան | 14085 | 2011 | I |
| 32 | 34039990 | Հակակորոզիոն նյութ | - | կգ | 10.8 | Գերմանիա | Վրաստան | 50524 | 2011 | I |
| 33 | 35061000 | Սոսինձ CF900 փայտի և պլաստմասայի համար | CF900 | կգ | 88.65 | Թուրքիա | Վրաստան | 416166 | 2011 | I |
| 34 | 32149000 | Սիլիկոն մինչև 1 կգ փաթեթավորմամբ | - | կգ | 24 | Թուրքիա | Վրաստան | 112275 | 2011 | I |
| 35 | 39173990 | Պլաստմասե խողովակներ | - | կգ | 9.1 | Ֆրանսիա | Վրաստան | 42737 | 2011 | I |
| 36 | 39173990 | Պլաստմասե խողովակներ մետաղյա փաթույթով | - | կգ | 322.6 | Թուրքիա | Վրաստան | 1513791 | 2011 | I |
| 37 | 39191019 | Պոլիմերային մեկուսիչ ժապավեն | - | կգ | 0.23 | Թուրքիա | Վրաստան | 1079 | 2011 | I |
| 38 | 84212100 | Ջրի ֆիլտր | - | հատ | 34 | Թուրքիա | Վրաստան | 2582637 | 2011 | I |
| 39 | 84213920 | Օդազտիչ (ֆիլտր) | - | հատ | 1 | ԱՄՆ | Վրաստան | 15259 | 2011 | I |
| | | Էլեկտրական | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 40 | 39259080 | հաղորդալարերի հավաքման պլաստմասե ամրակներ | - | կգ | 25.93 | Թուրքիա | Վրաստան | 126229 | 2011 | I |
| 41 | 40091100 | Ռետինե ճկախողովակներ | - | կգ | 27.2 | Թուրքիա | Վրաստան | 127717 | 2011 | I |
| 42 | 40092200 | Ռետինե ճկախողովակներ կցամասերով և մետաղական ցանցով | - | կգ | 63.4 | Թուրքիա | Վրաստան | 297646 | 2011 | I |
| 43 | 40169300 | Ռետինե միջադիրներ | - | կգ | 20 | Թուրքիա | Վրաստան | 91132 | 2011 | I |
| 44 | 40169999 | Ռետինե խցաններ | - | կգ | 0.15 | Թուրքիա | Վրաստան | 711 | 2011 | I |
| 45 | 48120000 | Քամիչ թղթյա (զտիչ) | - | կգ | 0.3 | Թուրքիա | Վրաստան | 1411 | 2011 | I |
| 46 | 48114190 | Թուղթ ինքնակպչուն չտպագրված | - | կգ | 0.1 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 470 | 2011 | I |
| 47 | 53039000 | Պարուրաթել ոչ պոլիմերային | - | կգ | 2 | Թուրքիա | Վրաստան | 9405 | 2011 | I |
| 48 | 68042290 | Հղկող կտրող սկավառակներ | - | կգ | 14.76 | Թուրքիա | Վրաստան | 67511 | 2011 | I |
| 49 | 68132000 | Ներդիրներ ցելյուլոզայից և միներալ նյութերից ասբեստ պարունակող | - | կգ | 5.53 | Թուրքիա | Վրաստան | 101336 | 2011 | I |
| 50 | 76109090 | Շին. կոնստրուկցիոն հարթակներ ալյումինե թիթեղից | - | կգ | 1070 | Թուրքիա | Վրաստան | 5024011 | 2011 | I |
| 51 | 70179000 | Լաբարատոր ապակյա ամաններ | - | կգ | 1.12 | Թուրքիա | Վրաստան | 5264 | 2011 | I |
| 52 | 72085400 | Սև (հարթ) մետաղյա թիթեղներ | - | կգ | 69.9 | Թուրքիա | Վրաստան | 328208 | 2011 | I |
| 53 | 72161000 | Սև մետաղյա շվելեր | - | կգ | 603.36 | Թուրքիա | Վրաստան | 2832989 | 2011 | I |
| 54 | 72166900 | Սև մետաղյա անկյունակներ | - | կգ | 235.32 | Թուրքիա | Վրաստան | 1104876 | 2011 | I |
| 55 | 73072390 | Ծունկեր և արմունկներ | - | կգ | 158.18 | Թուրքիա | Վրաստան | 742278 | 2011 | I |
| 56 | 73049000 | Խողովակներ սև մետաղից առանց կարի | - | կգ | 3551.06 | Թուրքիա | Վրաստան | 16672859 | 2011 | I |
| 57 | 73084090 | Շին. կոնստրուկցիաներ ցինկապատ | - | կգ | 1039.01 | Թուրքիա | Վրաստան | 4878592 | 2011 | I |
| 58 | 73071190 | Խողովակի կցամասեր սև մետաղներից | - | կգ | 203.9 | Թուրքիա | Վրաստան | 956144 | 2011 | I |
| 59 | 73072990 | Խողովակի կցամասեր սև մետաղներից | - | կգ | 1.85 | Ֆրանսիա | Վրաստան | 8402 | 2011 | I |
| 60 | 82055990 900 | Ձեռքի մեխանիկական գործիքներ | - | կգ | 0.4 | Ֆրանսիա | Վրաստան | 1881 | 2011 | I |
| 61 | 73072100 | Խողովակների կցաշուրթեր սև մետաղներից | - | կգ | 398.04 | Թուրքիա | Վրաստան | 1868661 | 2011 | I |
| 62 | 73072990 | Խողովակների կցամասեր սև մետաղներից | - | կգ | 8.96 | Թուրքիա | Վրաստան | 42070 | 2011 | I |
| 63 | 73079319 | Խողովակների կցամասեր սև մետաղներից | - | կգ | 112.69 | Թուրքիա | Վրաստան | 528645 | 2011 | I |
| 64 | 73101000 | Տարրաններ մետաղական սև մետաղներից | - | կգ | 54.35 | Թուրքիա | Վրաստան | 255189 | 2011 | I |
| 65 | 73101000 | Տարրաններ մետաղական սև մետաղներից | - | կգ | 12.8 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 60100 | 2011 | I |
| 66 | 85311095 322 | Հակահրդեհային ազդանշանի վահանակ | Mavili MP8 | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 20658 | 2011 | I |
| 67 | 73181290 | Պտուտակներ սև մետաղից | - | կգ | 26 | Թուրքիա | Վրաստան | 109359 | 2011 | I |
| 68 | 73181590 | Հեղյուսներ սև մետաղից | - | կգ | 212.55 | Թուրքիա | Վրաստան | 997132 | 2011 | I |
| 69 | 82055990 900 | Ձեռքի մեխանիկական գործիքներ | - | կգ | 1.6 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 7513 | 2011 | I |
| 70 | 73181699 | Մանեկներ սև մետաղից | - | կգ | 161.28 | Թուրքիա | Վրաստան | 757595 | 2011 | I |
| 71 | 73182200 | Տափօղակներ սև մետաղից | - | կգ | 7.07 | Թուրքիա | Վրաստան | 33096 | 2011 | I |
| 72 | 73269030 | Աստիճաններ մետաղական սև մետաղից | - | կգ | 672.7 | Թուրքիա | Վրաստան | 18203582 | 2011 | I |
| 73 | 73269098 | Ամրակներ, տակդիրներ, ամրաշրջանակներ և այլ սև մետաղական արտադրանք | - | կգ | 3939.98 | Թուրքիա | Վրաստան | 103019419 | 2011 | I |
| 74 | 73269098 | Ամրակներ սև մետաղից | - | կգ | 6.76 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 31740 | 2011 | I |
| 75 | 73269098 | Ամրակներ սև մետաղից | - | կգ | 0.25 | Շվեյցարիա | Վրաստան | 1174 | 2011 | I |
| 76 | 73089099 | Ցինկապատ խողովակներ | - | կգ | 214.9 | Թուրքիա | Վրաստան | 4978481 | 2011 | I |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | օդափոխիչի համար ուղղանկյուն կտրվածքով | | | | | | | | |
| 77 | 82032090 | Վարթաշուրթեր | - | կգ | 1.9 | Թուրքիա | Վրաստան | 8920 | 2011 | I |
| 78 | 82055990 900 | Ձեռքի մեխանիկական գործիքներ | - | կգ | 60.9 | Թուրքիա | Վրաստան | 285981 | 2011 | I |
| 79 | 82074010 | Գործիքներ ներքին պարուրակի ակոսման համար | - | կգ | 5.35 | Թուրքիա | Վրաստան | 25215 | 2011 | I |
| 80 | 82075090 | Գայլիկոն | - | կգ | 2.26 | Թուրքիա | Վրաստան | 10710 | 2011 | I |
| 81 | 83024900 | Ամրակապեր սև մետաղյա ցինկապատ | - | կգ | 20.4 | Թուրքիա | Վրաստան | 95653 | 2011 | I |
| 82 | 83111090 | Էլեկտրոդներ | - | կգ | 105.4 | Թուրքիա | Վրաստան | 494842 | 2011 | I |
| 83 | 84213920 | Օդազտիչներ (ֆիլտր) | - | հատ | 5 | Թուրքիա | Վրաստան | 11275 | 2011 | I |
| 84 | 84249000 | Մեխանիկական հեղուկացիրի մաս (գլխիկ) | - | հատ | 1 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 470 | 2011 | I |
| 85 | 96035000 | Խոզանակներ մետաղյա | - | հատ | 20 | Թուրքիա | Վրաստան | 42249 | 2011 | I |
| 86 | 84818099 | Ապահովիչ կափույրներ, ծորակներ և համանման ապրանքներ սև մետաղներից | - | կգ | 1631.52 | Թուրքիա | Վրաստան | 7660339 | 2011 | I |
| 87 | 84818099 | Կափույրներ սև մետաղներից | - | կգ | 5.2 | Շվեյցարիա | Վրաստան | 24416 | 2011 | I |
| 88 | 84818099 | Կափույրներ սև մետաղներից | - | կգ | 15 | Իսպանիա | Վրաստան | 70431 | 2011 | I |
| 89 | 84818099 | Կափույրներ սև մետաղներից | - | կգ | 2.9 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 13615 | 2011 | I |
| 90 | 84818087 | Թաղանթավոր կափույրներ | - | կգ | 0.32 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 1502 | 2011 | I |
| 91 | 85051990 | Հաստատուն մագնիս | - | կգ | 0.05 | Թուրքիա | Վրաստան | 237 | 2011 | I |
| 92 | 85159000 | Բռնիչներ էլեկտրոդի համար | - | կգ | 1.4 | Թուրքիա | Վրաստան | 6576 | 2011 | I |
| 93 | 85361050 | Սարքեր հոսանքի ուժը 10 Ա ավելի, բայց 63 Ա ոչ ավելի | - | կգ | 11.5 | Թուրքիա | Վրաստան | 53586 | 2011 | I |
| 94 | 85362010 | Ավտոմատ անջատիչներ | - | կգ | 2.9 | Թուրքիա | Վրաստան | 13633 | 2011 | I |
| 95 | 85363030 | Էլեկտրական շղթայի պաշտպանիչ | - | կգ | 1.56 | Կանադա | Վրաստան | 7320 | 2011 | I |
| 96 | 85364900 | Ռելե | - | կգ | 0.9 | Թուրքիա | Վրաստան | 4221 | 2011 | I |
| 97 | 85369010 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր հաղորդալարերի և կաբելների համար | - | կգ | 0.3 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 1411 | 2011 | I |
| 98 | 85369010 | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր հաղորդալարերի և կաբելների համար | - | կգ | 38.46 | Թուրքիա | Վրաստան | 180574 | 2011 | I |
| 99 | 85381000 | Պուլտեր, վահաններ, բարձակներ, սեղաններ, բաշխիչ վահաններ | - | կգ | 1284.5 | Թուրքիա | Վրաստան | 6030948 | 2011 | I |
| 100 | 85392290 014 | Էլեկտրական լամպեր – 250 Վատտ | - | հատ | 36 | Թուրքիա | Վրաստան | 125850 | 2011 | I |
| 101 | 85392290 011 | Էլեկտրական լամպեր – 36 Վատտ 2 հատ և 58 Վատտ 2 հատ | - | հատ | 4 | Թուրքիա | Վրաստան | 190 | 2011 | I |
| 102 | 85441190 | Պղնձե մալուխներ | - | կգ | 1413.64 | Թուրքիա | Վրաստան | 27140312 | 2011 | I |
| 103 | 90261029 | Հեղուկների ծախսման հսկողության սարքեր | - | հատ | 7 | Թուրքիա | Վրաստան | 54942 | 2011 | I |
| 104 | 90251180 | Տեխնիկական ջերմաչափեր | - | հատ | 28 | Թուրքիա | Վրաստան | 53440 | 2011 | I |
| 105 | 90269000 | Չափիչ սարքերի պահեստամասեր | - | կգ | 9.2 | Գերմանիա | Վրաստան | 43193 | 2011 | I |
| 106 | 90262080 | Ջրի ճնշման չափիչ սարք, մանոմետրեր | - | հատ | 6 | Գերմանիա | Վրաստան | 45362 | 2011 | I |
| 107 | 90262080 | Ջրի ճնշման չափիչ սարք, մանոմետրեր | - | հատ | 15 | Թուրքիա | Վրաստան | 44196 | 2011 | I |
| 108 | 90269000 | Մանոմետրի կցամաս | - | կգ | 1.8 | Թուրքիա | Վրաստան | 8457 | 2011 | I |
| 109 | 90275000 | Տուրբիդիմետր | - | հատ | 1 | Գերմանիա | Վրաստան | 13615 | 2011 | I |
| 110 | 90278011 | Չափիչ սարք PH մետր | - | հատ | 1 | ԱՄՆ | Վրաստան | 11457 | 2011 | I |
| 111 | 90278091 | Մածուցիկաչափ (վիսկոզիմետր) | - | հատ | 1 | ԱՄՆ | Վրաստան | 38221 | 2011 | I |
| 112 | 90278097 | Խտաչափեր | - | հատ | 4 | Թուրքիա | Վրաստան | 5628 | 2011 | I |
| 113 | 90279050 | Վիսկոզիմետրի մաս | - | կգ | 6.42 | ԱՄՆ | Վրաստան | 30143 | 2011 | I |
| 114 | 90282000 | Հեղուկահաշվիչ | - | հատ | 1 | ԱՄՆ | Վրաստան | 2581 | 2011 | I |
| 115 | 90282000 | Հեղուկի հաշվիչներ | - | հատ | 5 | Գերմանիա | Վրաստան | 1671180 | 2011 | I |
| 116 | 90282000 | Հեղուկահաշվիչ | - | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 5165 | 2011 | I |
| 117 | 90292038 | Տախոմետրեր | - | հատ | 3 | Թուրքիա | Վրաստան | 427 | 2011 | I |
| 118 | 90299000 | Տախոմետրի մաս | - | կգ | 1.2 | Թուրքիա | Վրաստան | 5636 | 2011 | I |
| 119 | 90321020 | Թերմոստատ | - | հատ | 1 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 2956 | 2011 | I |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 120 | 94051021 | Լուսատուներ – 38 հատ | - | կգ | 420.9 | Թուրքիա | Վրաստան | 1976296 | 2011 | I |
| 121 | 96039099 | Խոզանակներ երկաթյա | - | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 1407 | 2011 | I |
| 122 | 96082000 | Մարկերներ | - | հատ | 100 | Թուրքիա | Վրաստան | 3645 | 2011 | I |
| 123 | 27101999 | Օդազտիչի յուղ | - | կգ | 10 | Թուրքիա | Վրաստան | 46951 | 2011 | I |
| 124 | 39201089 | Տեֆլոնային ժապավեն կցամասերի համար | - | կգ | 50 | Թուրքիա | Վրաստան | 231477 | 2011 | I |
| 125 | 84195000 221 | Ջերմափոխանակիչներ | Alfa laval M6MFM | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 5212462 | 2011 | I |
| 126 | 84195000 220 | Ջերմափոխանակիչ | Alfa laval M3FG | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 810828 | 2011 | I |
| 127 | 85311030 481 | Հակահրդեհային ազդանշանի դետեկտորներ | Mavili MG2500 | հատ | 25 | Թուրքիա | Վրաստան | 14144 | 2011 | I |
| 128 | 85311030 482 | Ազդանշաններ հակահրդեհային | Mavili MG5000 | հատ | 4 | Թուրքիա | Վրաստան | 3008 | 2011 | I |
| 129 | 85311030 483 | Հակահրդեհային ազդանշանի կոճակներ | Telemekanik Xalk 174 | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 2818 | 2011 | I |
| 130 | 84138100 013 | Պոմպեր ջրի | Wilden PX1/SSAAA/WFS/WF/SWF | հատ | 2 | ԱՄՆ | Վրաստան | 94968 | 2011 | I |
| 131 | 84137081 205 | Պոմպեր ջրի | Wilo IPL32/90 37/2 | հատ | 4 | Գերմանիա | Վրաստան | 394926 | 2011 | I |
| 132 | 84138100 014 | Պոմպեր ջրի | KSB B Blok 65 160 | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 507765 | 2011 | I |
| 133 | 84138100 015 | Պոմպեր ջրի | KSB B Blok 32 200 | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 921497 | 2011 | I |
| 134 | 84133020 412 | Պոմպ յուղի | Netzsch NT20.64 | հատ | 1 | Գերմանիա | Վրաստան | 244480 | 2011 | I |
| 135 | 84138100 016 | Պոմպ ամիակային սելիտրայի լուծույթի | Mono pump E13DS87RMH/H11S | հատ | 1 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 1071947 | 2011 | I |
| 136 | 84133020 413 | Պոմպեր յուղի | Mono pump SLF50221V5/G669 | հատ | 2 | Մեծ Բրիտանիա | Վրաստան | 498363 | 2011 | I |
| 137 | 84138100 017 | Պոմպեր էմուլսիայի | Napco PA200STA | հատ | 2 | ԱՄՆ | Վրաստան | 10763408 | 2011 | I |
| 138 | 84145980 832 | Ասպիրատորներ տանիքի | Incircioglu U HNN RU450M | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 1100155 | 2011 | I |
| 139 | 84798200 181 | Խառնիչ մագնիսական | Elektromag M221 | հատ | 1 | Թուրքիա | Վրաստան | 11753 | 2011 | I |
| 140 | 84798200 182 | Էմուլսիոն մատրիցայի խառնիչ | Sulzer SMXDN25 | հատ | 1 | Շվեյցարիա | Վրաստան | 8461 | 2011 | I |
| 141 | 85071049 155 | Մարտկոցներ | Leoch LP12 7.0 | հատ | 2 | Թուրքիա | Վրաստան | 19747 | 2011 | I |
| 142 | Ընդամենը | | | | | | | 453149321 | | |

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար** **Դ. Սարգսյան**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2011 թվականի**
**փետրվարի 17-ի N 135-Ա որոշման**

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

## «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան «_____»......................... 2011թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Տիգրան Դավթյանի, մի կողմից, և «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Սասուն Ավետիսյանի (այսուհետ՝ ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N135-Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում:

### 2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝
2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:
2.2. Նախարարությունն իրավունք ունի՝
2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.
2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:
2.3. Ընկերությունը պարտավոր է՝
2.3.1. մինչև 2011 թվականի հունիսի 1-ը կառուցել ներդրումային ծրագրով նախատեսված արդյունաբերական էմուլսիոն պայթուցիկ նյութերի արտադրության գործարան.
2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 35 նոր աշխատատեղ՝ ապահովելով մոտ 130 հազ. դրամ միջին աշխատավարձ.
2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.
2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների

վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

**3. Հաշվետվություն և մոնիթորինգ**

3.4. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.5. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.6. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.7. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.8. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.9. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում, նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու ընկերությունից վճարելու հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 135-Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**5. Պայմանագրի գործողության ժամկետը**

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

**6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. Եզրափակիչ դրույթներ**

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

**8. Կողմերի հասցեները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Դեղոյան 25 |
| _________________ Տիգրան Դավթյան | ___________________ Սասուն Ավետիսյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար** **Դ. Սարգսյան**